Հարգելի ներկաներ,

ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտում աշխատում եմ 11 տարի: Այս ընթացքում ականատես եմ եղել բազմաթիվ բարեփոխումների, որոնք նախաձեռնել և հաջողությամբ իրականացրել է ինստիտուտի տնօրենը: Կարծում եմ կատարված բարեփոխումներից շատերը կարող են կիրառել նաև մյուս ինստիտուտները: Անդրադառնամ դրանցից ամենաառանցքայիններին:

<u>Բարեփոխումներ հրապարակումների տեսանկյունից.</u>

- ՏԻ կողմից հրապարակվում են հիմնականում գիտական հիմքով կիրառական բնույթի նյութեր, որոնք կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության զարգացման նպատակով:
- ՏԻ-ն բաժանմունքի այն քիչ ինստիտուտներից է, որ իր հրապարակումները տեղադրում է եռալեզու կայքում՝ բաց հասանելիությամբ (բաժանմունքում նման մոտեցում ցուցաբերում են նաև արվեստի, լեզվի և արևելագիտության ինստիտուտները):
- ՏԻ-ն միակն է բաժանմունքում, որ մի շարք հրապարակումների առանցքային դրույթներն առանձնացնում և հրատարակում է նաև դրանց հակիրճ տարբերակները: Ինչպես ցույց տվեց վերջին 2 տարվա փորձը սա շատ կարևոր գործիք է ՀՀ Կառավարության տարբեր ներկայացուցիչների համար և թույլ է տալիս նրանց ստանալու իրենց համար անհրաժեշտ տեղեկատվությունը հնարավորին նվազագույն ժամկետում:
- ՏԻ կողմից հրապարակվող հոդվածների ժողովածուներում տեղ են գտնում միայն համապատասխան որակ ապահովող հոդվածները, քանի որ հոդվածներն անցնում են բազմաքայլ ստուգումներ. նախ հոդվածներն անցնում են երկկողմ կույր գրախոսություն և գրախոսվում են համապատասխան ոլորտի 3 փորձագետների կողմից, ստուգվում է դրանցում նորույթի առկայությունը, անհրաժեշտ մասերի պարտադիր պահպանումը, 200-300 բառ համառոտագրի առկայությունը և ռուսերեն ու անգլերեն լեզուներով որակյալ մասնագիտական թարգմանությունը, ինչպես նաև ամենայն մանրամասնորեն ստուգվում է արտագրության առկայությունը ոչ միայն հայերեն նյութերից, այլև ռուսերեն և անգլերեն նյութերի թարգմանաբար ներկայացումը՝ առանց հեղինակի նշման:

<u>Կառուցվածքային բարեփոխումներ.</u>

- Ինստիտուտում նախկինում գործող բաժինները այժմ գոյություն չունեն, պահպանվել են միայն կանոնադրությամբ սահմանված գիտական ուղղությունները, որոնց ներքո ստեղծվում են մոբիլ խմբեր տվյալ ժամանակահատվածում առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված վերլուծություններ կատարելու համար:
- Խմբերի ղեկավարները, երբեմն նաև՝ անդամները, ակտիվ համագործակցում են միմյանց հետ տարբեր պետական կառույցների կողմից ներկայացվող փաստաթղթերի փորձագիտական կարծիքի տրամադրման համատեքստում:

- ՏԻ յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքային պարտականությունների մեջ վերլուծական և փորձագիտական աշխատանքից զատ ներառված են հավելյալ պարտականություններ, որով ինստիտուտը կարծում եմ ակադեմիական համակարգում եզակիներից է, եթե ոչ միակը: Մասնավորապես՝ աշխատակիցներից մի քանիսը պատասխանատու են ինստիտուտի հանրային կապերի համար, մյուսները՝ ռուսերեն և անգլերեն մասնագիտական թարգմանությունների համար, մի քանիսի վրա դրված է կայքի համապատասխան ծրագրային ապահովումը, մի քանիսի վրա՝ հայալեզու նյութերի պատրաստումը, մյուս աշխատողների պարտավորությունների մեջ ներառված է ինստիտուտի համացանցային ակտիվության նպաստումը՝ ֆեյսբուքի, լինկեդինի էջերի վարումն ու նորությունների տեղադրումը, ինչպես նաև յութուբյան ալիքի դիտումների ավելացումը: Սա նախ հնարավորություն է տալիս զարգացնելու աշխատակիցների ունեցած համեմատական և մրցակցային առավելությունները, և բացի այդ մեծացնելու նրանց ներգրավվածությունը ինստիտուտի առօրյա կյանքին, ինչի արդյունքում նրանք նախ իրենց գնահատված են զգում և զգում են իրենց մեր մեծ ընտանիքի մի մասնիկը:

<u>Բարփոխումներ ինստիտուտի թեմատիկայի ընտրության համատեքստում</u>

- ՏԻ կողմից յուրաքանչյուր տարի կատարվող թեմաներն ընտրվում են հիմք ընդունելով ՀՀ Կառավարության գործունեության ծրագրի ելակետային դրույթները, ինչն առավել արդիական է դարձնում հետազոտական թեմաները:

<u>Բարեփոխումներ, որ կարելի է իրականացնել ակադեմիական համակարգում</u>

- Ներկայում ՀՀ ԳԱԱ ինստիտուտների աշխատակիցները շատ քիչ են շփվում միմյանց հետ և գրեթե չեն ճանաչում միմյանց: ՀՀ ԳԱԱ-ն ընդհանուր աշխատակիցների թվաքանակով խոշոր կազմակերպություն է, ուստի վատ չէր լինի եթե ընդօրինակեր խոշոր կազմակերպություններին հատուկ անձնակազմի մերձեցման մի շարք միջոցառումներ՝ մրցաշարեր ինստիտուտների միջև, համատեղ ճանաչողական արշավներ և այլն:
- Երիտասարդ գիտաշխատողներին մոտիվացնելու նպատակով կարելի է կազմակերպել երիտասարդ գիտաշխատողների ամենամյա մրցույթներ ոչ միայն մասնագիտական, այլև սիրողական զբաղմունքների՝ երգ, պար, ասմունք և այլն տեսանկյունից՝ լավագույններին տրամադրելով խրախուսական մրցանակներ:
- Կարելի է ներդնել ընդհանուր գնահատման համակարգ, որը համեմատական վերլուծության միջոցով կներկայացնի լավագույն կայք, ամենաշատ հրապարակումներ, ամենաշատ հղումներ և այլ չափանիշներով լավագույնը հանդիսացող ինստիտուտներին, որոնք էլ կկիսվեն մյուսների հետ իրենց փորձով՝ ներկայացնելով, թե ինչպես են հասել այդ արդյունքին: